

է և պատկանում է այն գրուածքներին, որոնց միակ նպատակն է հաճելի կերպով խուսուտ ածել ընթերցողների նեարդերը:

Մի քիչ տարօրինակ է այդպիսի դատարկաբանութիւններով զբաղուել մեր արիւնոտ վիճակում ու ընթերցողների յիմար ծիծաղից կոպէկներ մզել սոսկալի գազանութիւնների զոհերի օգտին: Բացի այդ, ցաւալի է, որ ընթերցողներին խուսուտ ածելու գերը վերցրել է իր վրայ մի հեղինակ, որ ինչպէս հէնց այդ գրուածից կարելի է եզրակացնել, օժտուած է իւմորիստի ձիրքով,—մի ձիրք, որ այնքան հազուադիւտ է ծիծաղը մոռացած հայրիս մէջ:

Գրուածքի արժանաւորութիւններից առանձին յիշատակութեան արժանի է այրարատեան բարբառի հարուստ հիւթերով սնուած ոճը, իսկ պակասութիւններից՝ գրական ճաշակի բացակայութիւնը (այլապէս չենք կարող բացատրել՝ օրինակ՝ այն հանգամանքը, որ հեղինակը հնարաւոր է համարում պատմել ընթերցողներին, թէ ինչպէս զիշերը, հիւր տեղում, իր մարմնի շիրանները փուլ եկան և թարախը կեղաստացրեց տակի սաւանը):

Տ. Յ.

Պրոֆ. Վեներ Զովրաց. «Թէ ինչու մեր օրերում ամենին հետաքրքրութեան անունուական և սոցիալ-քաղաքական հարցեր». Դերմ. թարգմ.

Արտաշէս Արեգեան, 40 եր., Թիֆլիս, 1905, գինը 10 կ.

Գրքոյկի բովանդակութիւնը պարզ է վերնագրից:

Հեղինակը, որի գրածները կարօտ չեն յանձնարարութեան, ապացուցանում է այդ գրքոյկում, որ «անտեսագիտութիւնը հանդիսանում է մեր օրերում իբրև մի տեսակ կենտրոնական գիտութիւն, ինչպէս էր ընագիտութիւնը վերջին տասնեամեակներում և փիլիսոփայութիւնն ու՝ աստուածաբանութիւնը աւելի առաջ» և որ ներկայումս ամեն մարդ, լինի նա հոգևորական, բժիշկ, իրաւաբան, բանաւոր թէ վաճառական, կին թէ այր մարդ, պարուաւոր է ըրստ կարողութեան ձգտել ընդարձակելու իր ունեցած անտեսական և սոցիալ-քաղաքական ծանօթութիւնները»:

Թարգմանութիւնը յաջող է: Պ. Արտաշէս Արեգեան, ինչպէս երևում է, թարգմանչական ձիրք ունի: Բնագիրը հայերէնացրած է, իսկ հայերէնը՝ կանոնաւոր: Ցանկալի կը լինէր միայն, որ թարգմանիչը մի քիչ ժողովրդական շունչ մտցնէր իր հայերէնի մէջ, ոճը աւելի մօտեցնէր խօսակցականին և

խուսափէր այնպիսի գրաբարաբանութիւններից, ինչպէս է.
«Խորհել պարտենք», «այդունակ», և այլն:

Ճ. Յ.

Յարարիւն Եսայեան. «Միեւնոյն դագաղում» պատկեր, 16 երես. Թիֆ-
լիս, 1905, գ. 4 կ.:

«Միեւնոյն դագաղում»-ը՝ մի յաջողուած պատկեր է կով-
կասեան վերջին դառն իրականութիւնից:

Խնձ առանձնապէս դուր է գալիս պատկերի մույլացումը
(զամաւը), որ իրաւունք է տալիս ասելու, թէ պ. Եսայեանի
մէջ սկսում է արտայայտուել բելեւտիստի ձիրք:

Կատարումը նոյնպէս վաս չէ, բայց այդ կողմից՝ պատ-
կերի արժանաւորութիւնները աւելի բացասական արժանաւո-
րութիւններ են: Պատկերը ազատ է խոշոր պակասութիւններից:
Աչքի է ընկնում մանաւանդ այն պակասութիւնների բացակայու-
թիւնը, որոնք մատնանիշ արուեցին պ. Եսայեանի առաջն
պատկերները քննադատողների կողմից:

Պատկերի ոճը ամփոփ է և լեզուն՝ իսկական հայերէն,
որ ամենավին չի յիշեցնում պ. Եսայեանի թարգմանական հայ-
երէնը կլարա ծետկինի գրքում:

Ճ. Յ.

Փառնակիս. «Զօւռողի մալը ութողին հալալ առ կամ ռձարպիկ փաս-
տարան» վուրպիլ մէկ արտարուածով. Երևան 1905 թ. 58 եր. գ. 40 կ.

Բագուեցի երիտասարդ Սարգիս Օձխուզողեանը շանտաժի
միջոց է դարձնում Սինոդի վեջին կարգադրութիւնը. նրա նշա-
նածի, օրիորդ Զարուհու հայրը, Թորոս Ասլանեանը, տասը
հաղար բուրլու օժիտ է խոստացել: Այդ քիչ է թւում յարգելի
երիտասարդին: Նա այնպէս է ձևացնում, թէ մտազիր է հրա-
ժարուել օրիորդ Զարուհուց, որովհետեւ, ինչպէս լիել է, օրի-
որդի հայրը բարակացաւ ունի, իսկ մայրը՝ լուսնոտ է: Կաս-
կածները փարատելու համար՝ պահանջում է բժշկական քննու-
թեան ենթարկել օրիորդին և նրա ծնողներին: Ասլանեանները
դայրացած են: Երիտասարդը յայտնում է, որ կարելի է բանը
բժշկական քննութեան չհասցնել, սակայն այն պայմանով,
որ Ասլանեանները օրիորդի օժիտի վրայ մի հինգ հազար էլ
աւելացնեն, օրիորդի ապագայ բժշկութեան համար: